1004 Աստված սեր է հավիտյան,

Աստված սեր է հավիտյան,
Իր մեծ ողորմությունով,
Փրկեց մահից կորստյան,
Իր մեծ ողորմությունով,
Կյանք պարգևեց անսահման,
Հիսուս Փրկիչ Տեր Արքան,
Աստծո ողորմությունով: (2)

Նա մեղքերից ինձ սրբեց,
Իր մեծ ողորմությունով,
Եվ իր Սուրբ Հոգով լցրեց,
Իր մեծ ողորմությունով,
Ու հավատք ինձ պարգևեց,
Իր խոսքով առաջնորդեց
Աստծո ողորմությունով: (2)

Գոհանում եմ ես կրկին,
Աստծո ողորմությունով,
Եվ վառվում է իմ Հոգին,
Աստծո ողորմությունով,
Նրա անհուն բարությամբ,
Նրա սիրո զորությամբ,
Աստծո ողորմությունով: (2)

Հանկարծ ամեն բան կանցնի,
Նույնիսկ ողորմությունը,
Աստված երկրից կվերցնի
Իր մեծ ողորմությունը,
Բայց երկնքում կտեսնենք,
Փառքը մեր Տեր Հիսուսի
Աստծո ողորմությունով: (2)